

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Աստուծոյ ուզածը մեղքով լեցուն սիրտդ է

Սթէնպէրկ անունով գերմանացի նկարիչ մը Յիսուսի խաչելութեան նկարը գծեց եւ զանիկա կախեց սրահի մը մէջ: Նկարին տակ ան գրած էր հետեւեալը. «Անհուն շնորհք բերի քեզի, դուն ի՞նչ կու տաս ինձի»: Օր մը երբ մեծահարուստ երիտասարդ մը Սթէնպէրկի գծած խաչելութեան պատկերին նայեցաւ եւ կարդաց անոր տակի գրութիւնը. «Անհուն շնորհք բերի քեզի, դուն ի՞նչ կու տաս ինձի», պատասխանեց եւ ըսաւ. «Իմ աղտոտ սիրտս կու տամ քեզի»: Սիրելի՛ ընթերցող, քեզմէ պահանջուածը ոսկին ու դրամը չէ, ինքզինքդ զոհելը կամ այրելը չէ: Քեզմէ պահանջուածը մեղքով լեցուն սիրտդ է: Տո՛ւր զանիկա Աստուծոյ, որպէսզի իր Որդիին արիւնով մաքրէ զայն եւ իրեն բնակարան դարձնէ:

ՄԵԿ ՏԱՐՈՒՄԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ ԿԱՐԴԱՆՔ ԱՄԲՈՂՁ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

ՅՈՒՆՈՒՄ 2020

18	Ծննդոց 43,44,45	Մատթէոս 12:22-50
19	Ծննդոց 46,47,48	Մատթէոս 13:1-30
20	Ծննդոց 49,50	Մատթէոս 13:31-58
21	Ելից 1,2,3	Մատթէոս 14:1-21
22	Ելից 4,5,6	Մատթէոս 14:22-36
23	Ելից 7,8	Մատթէոս 15:1-20
24	Ելից 9,10,11	Մատթէոս 15:21-39

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ քերթ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ
ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ
ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Կազմակերպութեամբ Կրօնական ժողովին եւ Ազգային առաջնորդարանի «ԱՅՈ» երիտասարդական յանձնախումբին, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, սուրբ պատարագ պիտի մատուցուի:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Հոգեւոր խորհրդածութիւնն պիտի կատարէ Լիբանանի Հայոց առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Նաեւ, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-9:00, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, Արժ. Տ. Ղեւոնդ քհն. Լոշխաճեան Աստուածաշունչի սերտողութիւնն պիտի կատարէ մեր ժողովուրդի զաւակներուն համար:

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ քերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՍՏԵՂ ԽՍ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 19 ՅՈՒՆՈՒՄ 2020

ԹԻՒ 3

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ետայի 54.1-14: Ա. Տմ. 1.1-11:
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 2.1-11

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
2.1-11**

Յիսուսի Գալիլիա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանաքաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին: Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ. «Գինի չունին»:

«Մայր, մեզի ի՞նչ», - պատասխանեց Յիսուս, - «Իմ ժամանակս տակաւին չէ հասած»:

Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն. «Ինչ որ ըսէ ձեզի՛ կատարեցէ՛ք»: Հրեաներու ծիսական մաքրութեան սովորութեան համաձայն, հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիթր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն. «Կարասները ջուրով լեցուցէ՛ք»:

Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց. «Հիմա առէ՛ք եւ սեղանապետին տարէ՛ք»:

Անոնք ալ տարին: Սեղանապետը համտեսեց գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ՝ թէ ուրկէ էր, թէեւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին՝ գիտէին: Այն ատեն սեղանապետը փեսային ըսաւ. «Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամայէ, իսկ երբ գինովանա՛ այն ատեն հասարակը, մինչ դուն ընտիր գինին պահեր ես մինչեւ հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլիայի Կանաքաղաքին մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց եւ աշակերտները հաւատացին իրեն:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
54.1-13

Ուրախացիր, Երուսաղէմ, դուն՝
ամուլդ, որ չէիր ծնաներ. ձնծու-
թեամբ երգէ՛ եւ աղաղակէ՛: Դուն որ
չէիր երկներ, որովհետեւ դուն, ամ-
լութեան պատճառով լքուածդ, աւելի
շատ գաւակ պիտի ունենաս քան
ամուսին ունեցողը,- կ'ըսէ Տէրը: Ըն-
դարձակէ՛ վրանիդ տարածութիւնը,
ընդլայնէ՛ պատերը, տեղ մի՛ խնայեր-
չուանները երկարէ՛, ցիցերը ամրա-
ցու՛ր, որովհետեւ ամէն ուղղու-
թեամբ պիտի տարածուիս շուտով,
քու սերունդդ ազգերու պիտի տիրէ
եւ անոնց լքած քաղաքները պիտի
չինէ ու լեցնէ:

Մի՛ վախնար, այլեւս ամօթով
պիտի չմնաս. մի՛ ամչնար, այլեւս պի-
տի չնախատուիս. ամլութեանդ յաւի-
տենական ամօթը պիտի մոռնաս, այ-
րիութեանդ նախատինքը բնաւ պիտի
չլիչես, որովհետեւ Ստեղծիչդ քեզի
ամուսին պիտի ըլլայ: Ան՝ որուն ա-
նունն է՝ **ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐՔԵՐՈՒ
ՏԷՐ**, Իսրայէլի սուրբ Աստուածը՝ որ
պիտի փրկէ քեզ եւ ամբողջ աշխար-
հին ալ Աստուածը պիտի կոչուի:

Լքուած եւ վշտահար կին մը չէի՞ր,
կամ մերժուած նորահարս մը չէի՞ր,
երբ Տէրը քեզ կանչեց: Արդ, Աստուած
կ'ըսէ. «Թէեւ կարճ ժամանակ մը քեզ
լքեցի, բայց ողորմութեամբ եւ սիրով
քեզ պիտի ընդունիմ: Բարկութեան
պահուն կարճ ատեն մը երես
դարձուցի քեզմէ, բայց յաւիտենա-
կան սիրովս պիտի գթամ քեզի»,
- կ'ըսէ Տէրը, փրկիչդ:

«Ինչպէս ժամանակին ջրհեղե-
ղէն ետք Նոյին երդում ըրի՛ այլեւս
բնաւ երկիրը չպատժել ջրհեղեղով,
նոյնպէս ալ հիմա կ'երդնում, որ բար-
կութեամբս պիտի չպատժեմ քեզ:

Լեռները կրնան կորսուիլ եւ բը-
լուրները չքանալ, բայց ողորմութիւ-
նըս անպակաս պիտի ըլլայ քու վրա-
յէդ, խաղաղութեան ուխտս անասան
պիտի մնայ,- կ'ըսէ ողորմած Տէրը:



**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ
ՆԱՄԱԿԸ ՏԻՄՈԹԵՈՍԻՆ**

1.1-11

Ես՝ Պօղոս, որ Քրիստոս Յիսուսի
առաքեալն եմ, մեր փրկիչ Աստուծոյ
եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի
հրամանով քեզի կը գրեմ, հաւատքի
հարազատ որդիս, Տիմոթէոս: Թող
Հայրն Աստուած եւ մեր Տէրը Քրիս-
տոս Յիսուս՝ շնորհք, ողորմութիւն
եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Երբ Մակեդոնիա կ'երթայի
խնդրեցի, որ Եփեսոս մնաս եւ խօսիս
քանի մը հոգիներու, որպէսզի
դադրին օտար վարդապետութիւն-
ներ ուսուցանելէ եւ չզբաղին սկիզբ
ու վերջ չունեցող առասպելներով եւ
ազգահամարներով, որոնք վէճերու
դուռ կը բանան, փոխանակ օգնելու
մարդոց հաւատքին եւ Աստուծոյ
ծրագրին իրականացման: Գերագոյն
պատուիրանը սէրն է, անարատ սիր-
տէ, մաքուր խղճմտանքէ եւ անկեղծ
հաւատքէն բխած սէրը: Շատեր այս
պատուէրները մոռցած, դատարկ
վիճաբանութեանց մէջ մտնելով՝
մեզի Օրէնք սորվեցնելու ելեր են,
մինչդեռ ոչ իրենց խօսածը գիտեն, ոչ
ալ Աստուծոյ Օրէնքը, որուն մասին
այնքան վստահութեամբ կը ճառեն:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ
**ԱՆՏՈՆ ԵՒ ԿՐՕՆԻԴԷՍ
ՃԳՆԱԽՈՐՆԵՐ**

Կապանդովկեան Կեսարիոյ մէջ
կ'ապրէին այս երկու կրօնաւորները, եւ
հանրածանօթ էին իրենց նգնաւորա-
կան առաքելութեամբ: Լուսաւորիչ
միասին տարաւ զանոնք Հայաստան,
եւ երբ Տարօնոյ Ինակեան մետասանը
հաստատեց յանուն Յովհաննու Կարա-
պետին, անոնց եւ իրենց ընկերակցող-
ներուն յանձնեց նոյն սրբավայրին վա-
նական կազմակերպութեան եւ ծառա-
յութեան գործը: Իրենց այս նորստաց
պաշտօնը կատարեցին անոնք ամենայն
նախանձախնդրութեամբ, յաճախ ըն-
դունելով նաեւ Լուսաւորչի այցելու-
թիւնը: Իբր քառասուն տարի նուիրեալ
ծառայութեամբ ապրելէ եւ գործելէ
վերջ, խաղաղութեամբ կնիքեցին իրենց
կեանքը եւ թաղուեցան հոն, Դ. դարու
առաջին կիսուն վերջերս:

ՊԱՐՍԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Եպիսկոպոս էր Եղեսիոյ եւ
կ'աւանդուի, թէ դարձի բերել վերջ
նոյն քաղաքի Շարպիլ կուռքին մէկ
փուրմը, որ մարտիրոսացաւ այդ
պատճառաւ, ինք եւս հալածուելով
բանտարկուեցաւ Տրայանոս կայսեր
ժամանակ Լիւսիաս կառավարիչի օ-
րով, Բ. դարուն: Արեւելեան վկայաբա-
նութեանց համեմատ, անկա կայսեր
մասնաւոր արտօնութեամբ ազատ
արձակուելով մեռաւ խաղաղութեամբ,
իսկ ըստ Արեւմտեայց՝ իր կեանքը
կնիքեց բանտին մէջ: Եկեղեցական
պատմիչներէն շատեր, միւս կողմէ,
անոր մահը կը դնեն 250-ին, Դեկտի
օրով: Իսկ ուրիշ երկու Պարսամներ

կ'ընդունին. երկուքն ալ Եղեսիոյ ե-
պիսկոպոս. մին՝ Եղեսիոյ աթոռին Գ.
եպիսկոպոսը, Տրայանոսի օրով նա-
հատակուած, 114-ին, Լիւսիասի ձեռ-
քով. միւսը՝ Վաղենտիանոս արիոսա-
կան կայսրէն աքտորուած Եպիսկոպոս
եւ հոն մեռած 379-ին:

**ԵՐԲ ԱՊՕԹՔՆԵՐՈՒԳ
ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԸ ՓՆՏՈՒ
ԱՍՏՈՒՍԷ, ԿԱՐՂԱ՝**

ՏԷՐԸ թող լսէ աղօթքներդ, երբ
որ անձկութեան մէջ. մեր հայրերուն
Աստուծը ի՛նք թող պաշտպան ըլլայ
քեզի: Քեզի օգնութիւն թող դրկէ իր
սրբարանէն, եւ Միոնէն քեզ զօրացը-
նէ: ՏԷՐԸ թող յիշէ քու նուէրներդ, եւ
զոհերդ ընդունելի համարէ:

ՏԷՐԸ սրտիդ համեմատ թող
տայ քեզի, եւ քու բոլոր փափաքներդ
կատարէ:

Մենք քու բերած փրկութեամբդ
պիտի ցնծանք, եւ Աստուծոյ յաղ-
թանակին դրօշը պիտի կրենք: ՏԷՐԸ
կատարէ՛ բոլոր խնդրանքներդ:

Հիմա գիտցայ, որ ՏԷՐԸ կը փրկէ
իր օժեալը. անոր աղօթքին պատաս-
խան կուտայ իր սուրբ երկինքէն, եւ
իր զօրութեամբ անոր մեծամեծ յաղ-
թանակներ կը պարգեւէ: Ոմանք ի-
րենց պատերազմի կառքերուն, ու-
րիշներ ձիերու կ'ապաւինին, բայց
մենք Աստուծոյ՝ մեր ՏԻՐՈՋ կ'ա-
պաւինինք: Անոնք ծունկի պիտի
գան եւ իյնան, մինչ մենք կանգուն
պիտի մնանք՝ գլուխնիս բարձր:

Ո՛վ ՏԷՐ, փրկէ՛ թագաւորը, երբ
քեզ կանչենք՝ պատասխանէ՛ մեր ա-
ղօթքներուն: